ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022Թ. ՂՐՂԶՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԻՇՔԵԿ) ԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

   Արմեն Սիմոնյան
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալներ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Ղրղզստանի Հանրապետություն՝ ք. Բիշքեկ, 2022 թ. մայիսի 24-ից 27-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի և էներգետիկայի ոլորտում լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի նիստին, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական ինտեգրումը գլոբալ փոփոխությունների դարաշրջանում. ներդրման ակտիվությունների նոր հնարավորություններ» համաժողովին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել են ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկայի և գազի ընդհանուր շուկաների ձևավորման շրջանակներում ներկայումս քննարկվող փաստաթղթերի նախագծերի առնչությամբ (Միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագրի, գազի փոխադրման ծառայությունների հասանելիության միասնական կանոնների, գազի բորսային առևտրի իրականացման կարգի, ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի շրջանակներում էլեկտրաէներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ծառայություններին հասանելիության կանոնների, միջպետական հատումների թողունակության սահմանման և բաշխման կանոնների, էլեկտրաէներգիայի փոխադարձ առևտրի կանոնների նախագծեր), որոնք քննարկվել են ինչպես փորձագիտական, այնպես էլ լիազոր մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների մակարդակով, առաջացել են մի շարք խնդրահարույց հարցեր, որոնց շուրջ հնարավոր չի եղել ընդհանուր հայտարարի գալ:

   Նիստի ընթացքում ներկայացվել է խորհրդի 4-րդ նիստի որոշումների կատարման ընթացքը, ամփոփվել է ԵԱՏՄ մասնակից պետությունների համակարգված տրանսպորտային քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունների և փուլերի կատարմանն ուղղված միջոցառումների (ճանապարհային քարտեզի) ծրագրի

ընթացքը, խոսվել է միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ազատականացման նպատակահարմարության մասին:
Յուրաքանչյուր կողմ ներկայացրել է իր պետությունում կաբոտաժային բեռնափոխադրումների ծրագրի իրականացման, ինչպես նաև «Նավագնացության մասին» միջազգային համաձայնագրի նախագծի ընթացքը:
Քննարկվել է թռիչքների անվտանգության և ավիացիոն անվտանգության հարցերով աշխատանքային (փորձագիտական) խմբերի ստեղծման հարցը: Խոսվել է նաև մայիսի 26-ին կայանալիք պանելային նստաշրջանի ընթացքում քննարկվող բանաձևի մասին:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հ. Վարդանյանը և Ա. Սիմոնյանը մասնակցել են պանելային քննարկումներին և հանդես են եկել ելույթով:
Առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2022թ. նոյեմբեր-դեկտեմբերի ամիսներին անցկացնել Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի և Շանհայի համագործակցության կազմակերպության համատեղ նիստը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջարկներ չեն հնչել:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ԱՄԻՍ ԱՄՍԱԹԻՎ**

31.05.2022թ.